

ԼԵՎՈՆ ԶՈՒՐԱՔՅԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՐՅԸ ՀՈՒՍԵՅՆ-ՍԱԿՍԱՀՈՆ ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

I աշխարհամարտի տարիներին քրիտանաարաբական հսրաբերությունների ընթացքում անդրադարձներ եղան մաս Պաղեստինին: Նախապես շփումներ ունենալով արաբների հետ՝ I համաշխարհային պատերազմի ժամանակ քրիտանացիները՝ համձինս Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի Գլխավոր հյուպատոս Հենրի ՄակՄահոնի, բանակցությունների մեջ մտան Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ՝ նպատակ ունենալով ի դեմս արաբների թուրքերի քիկումքում ապստամբություն բարձրացնել: Հենրի ՄակՄահոնի և շերիֆ Հուսեյնի միջև բանակցություններն ընթացան մամակագրական կապի միջոցով և պատմության մեջ մտան «Հուսեյն-ՄակՄահոն մամակագրություն» անունով¹:

Հուսեյն-ՄակՄահոն մամակագրության հարցը գլխական քննարկման է ենթարկվել մի շարք հեղինակների կողմից, որոնցից հարկ է նշել հատկապես Ն. Հովհաննիսյանին, Վ. Կիսիլյովին, Վ. Լադեյկինին, Ռ. Ջոնին, Ս. Հադավին, Դ. Փայվաին, Դ. Ֆրամկինին, Ջ. Կլմենին, Ամին Սալոյին, Ալի Սուլտանին և այլն: Սակայն պետք է նշել, որ պատմագրությունը հատուկ ուշադրության չի արժանացրել այդ մամակագրության մեջ Պաղեստինի խնդրի արժարժմանը: Մինչդեռ դրա անհրաժեշտությունը կա, քանի որ հետագայում՝ 1939թ. Պաղեստինի հարցի համար կարևոր նշանակություն ունեցող Լոնդոնի կոնֆերանսում, այն հատուկ քննարկումների առարկա դարձավ:

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել 1969թ. Կահիրեում լույս տեսած «Պաղեստինի փաստաթղթերի ժողովածուն», ինչպես մասնի շարք հեղինակների՝ հիշյալ թեմային նվիրված աշխատություններ:

Մինչև քրիտանական մանդատը Պաղեստինը պատմաաշխուսրհագրական Սիրիայի մաս էր կազմում և հայտնի էր մաս որպես «Հարավային Սիրիա»²: Սիրիան Օսմանյան կայսրության կազմում մի քանի անգամ վարչական բաժանման էր ենթարկվել: 1914թ. այն բաժանված էր հիմնականում հինգ վարչական մասի՝ Հալեպի, Սիրիայի (Դամասկոսի),

Բեյրութի վիլայեթները, Լիբանանի մութասառիֆությունը և Երուսաղեմի սանջակը: Վերջին երկուսը որևէ վիլայեթի կազմի մեջ չէին մտնում, այլ անմիջապես ենթարկվում էին Բարձր Դռանը³: Պաղեստինի հյուսիսային մասը մտնում էր Բեյրութի վիլայեթի մեջ, իսկ մյուս մասը կազմում էր Երուսաղեմի սանջակը⁴:

Այսպիսին էր Պաղեստինի կարգավիճակը, երբ 1914թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան Գերմանիայի կողքին մտավ պատերազմի մեջ Անտանտի երկրների դեմ: Եզիպտոսում Մեծ Բրիտանիայի Գլխավոր հյուպատոս յորդ Քիչիները դեռ մինչև I աշխարհամարտը միջնորդավորված կապեր էր հաստատել Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ՝ ցանկանալով ապահովել արաբների աջակցությունը Մեծ Բրիտանիային⁵: 1914թ. հոկտեմբերի 31-ին արդեն Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարար դարձած լորդ Քիչիները Մեքքայի շերիֆ Հուսեյնի որդի էմիր Աբդալլահին ուղարկած նամակում տեղեկացնում էր, որ եթե արաբներն օգնեին Մեծ Բրիտանիային այդ պատերազմում, ապա վերջինս կերաշխավորեր արաբների անվտանգությունը և կկանխեր արտաքին ուժերի կողմից նրանց վրա հարձակումները: Մեծ Բրիտանիան, ըստ նամակի, կճանաչեր Շերիֆ Հուսեյնին որպես Հիջազի խալիֆա, կապահովեր խալիֆայության անկախությունն ու անվտանգությունը, կպաշտպաներ նրա իրավունքներն ու արտոնությունները⁶:

Միսթամանակ Հուսեյնը Բարձր Դռնից հրահանգ ստացավ՝ Ջիհադ հայտարարել «անհսկատների», այսինքն՝ Անտանտի դաշնակիցների դեմ⁷:

Հուլյանը չէր բացառում թուրքերի դեմ ապստամբության հնարավորությունը, սակայն՝ երբ էր այն սկսվելու և սրտեղից, նա չգիտեր: Նա Բարձր Դռնից իր որդուն՝ էմիր Ֆեյսալին, Ջիհադ հայտարարելու հրահանգի մանրամասները քննարկելու համար Կոստանդնուպոլիս ուղարկելու թույլատվություն խնդրեց: Սակայն իրականում Հուսեյնի նպատակն էր հնարավորություն ընձեռել Ֆեյսալին անցնելու ‘Դամասկոսով’ ծլարձակվող արաբական ազգայնական շարժման կենտրոնով: 1915 թվականի մարտի 26-ին ժամանելով ‘Դամասկոս’ Ֆեյսալ արաբ ազգայնական գործիչների հետ քննարկումներ վարեց Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելու հարցի շուրջ: Նրանք կազմեցին արձանագրություն, որը հայտնի է «Դամասկոսի արձանագրություն» խորագրով⁸:

Արձանագրության մեջ նշվում էր, որ Մեծ Բրիտանիան պետք է ճանաչեր արաբական երկրների անկախությունն արաբների աջակցության դիմաց: Պետք է վերացվեին օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված արտոնությունները, բացի Մեծ Բրիտանիայի քաղաքացիներից: Դամասկոսում արաբական ազգայնական առաջնորդները ճանաչեցին Հուսեյնին՝ որպես արաբ ազգի պատվիրակ: Ֆեյսալն արձանագրության օրինակը Մեքքա հասցրեց 1915թ. հունիսի 20-ին⁹:

Ստանալով արագ ազգայնականների աջակցությունը՝ 1915թ. հունիսի 14-ին Շերիֆ Հուսեյնը մամակ ուղարկեց Եզիպտոսում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսար Հենրի ՄակՄախոնին, որում շարադրում էր Սիրիայի արագ ազգայնականների կարծիքը Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելու հստակ շուրջ՝ շեշտադրելով արագ ազգի անկախության հասնելու ձգտումը¹¹։ Նամակում բրիտանացիներին արաբների աջակցության դիմաց առաջ էին քաշվում հետևյալ մախապայմանները.

1. Մեծ Բրիտանիան պետք է ճանաչեր արաբական երկրների անկախությունը, որի սահմանները պետք է լինեին հյուսիսում Մերսին-Ալանա գծից մինչև Պարսկաստանի սահմանը, արևելքում՝ պարսկական սահմանով մինչև Բասրայի ծոցը, հարավում՝ Հնդկական օվկիանոսը (բացի Ադենից, որը պահպանելու էր իր կարգավիճակը, այսինքն՝ մնալու էր բրիտանական տիրապետության ներքո), արևմուտքում՝ Կարմիր ծովն ու Միջերկրական ծովը՝ մինչև Սինայի թերակղզին:

2. Տնտեսական գործընկերության հարցում արաբական կառավարությունը մախապատվությունը տալու էր Մեծ Բրիտանիային, եթե առաջ քաշվող ծրագրերը համահավասար արտոնություններ ապահովեին բրիտանացիների և արաբների համար:

3. Երկուրդ ուժի կողմից հարձակման դեպքում կողմերը պետք է պարտավորվեին միասնական դիմադրություն ապահովել:

4. Եթե կողմերից մեկը հարձակվեր երկուրդ կողմի վրա, ապա մյուս կողմը կարող էր չեղարկել մախապանել: Եթե պատերազմի մեջ մտնող կողմը ցանկանում էր, որ մյուս կողմն իր հետ մասնակցի պատերազմին, ապա կողմերը պետք է հանդիպեին և քննարկեին պայմանները:

5. Այս կնքվելիք պայմանագրի երկուրդ և չորսուրդ կետերը ուժի մեջ էին լինելու տասնհինգ տարի: Եթե կողմերից մեկը ցանկանար երկաթացնել այդ կետերի ժամկետը, ասրս մյուս կողմին պետք է տեղեկացներ այդ մասին պայմանագրի ժամկետն ավարտելուց մեկ տարի առաջ¹¹:

Նամակագրությունը Շերիֆ Հուսեյնի և Հենրի ՄակՄախոնի միջև տևեց մինչև 1916թ. մարտի 10-ը: Ընդհանուր առմամբ տասը մամակ փոխանակվեց, որից ութը կապված էին ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանների հարցի հետ:

Նորին մեծության կառավարությունը դեռ 1915թ. հունիսին լիազորել էր Հենրի ՄակՄախոնին երաշխավորել Արաբական թերակղզում ալուսբակյան խալիֆայության ստեղծումը պատերազմից դաշնակիցների հաղթական դուրս գալու դեպքում¹²: 1915թ. օգոստոսի 30-ին ՄակՄախոնը Հուսեյնին ուղարկած պատասխան մամակում հայտնում էր, որ գերադասում էր ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանների հարցը քննարկել պատերազմից հետո, քանի որ այդ տարածքներից շատերը դեռ գտնվում էին զուտ թուրքական տիրապետության տակ¹³: Սակայն Հուսեյնը 1915թ. սեպտեմբերի 9-ին իր ուղարկած մամակում

հավանություն չտվեց ՄակՄահոնի՝ սահմանների հարցը հետազայում քննարկելու առաջարկին՝ շեշտելով, որ արաբ ժողովրդի աջակցությունը ձեռք բերելու համար բյվտանացիները պետք է ճշգրիտ նշեին ստեղծվելիք արաբական պետության սահմանները¹⁴:

Նամակի պարունակության մասին ՄակՄահոնը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը հայտնեց 1915թ. հոկտեմբերի 18-ին: Բրիտանական կառավարությունն, ի դեմս արտգործնախարար Էդուարդ Դ-րեյի, ամմիջապես կապ հաստատեց Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Բամբունի հետ և նրա միջոցով ֆրանսիական կառավարությանը տեղեկացրեց արաբ ազգայնականների ծրագրերի մասին¹⁵: 1915թ. հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի հետ իր կառավարության վարած բանակցություններից հետո. ՄակՄահոնը նամակ ուղարկեց Շերիֆին, որում գրում էր, որ Մերսինի ե Ալեքսանդրիթի շրջանները, ինչպես նաև Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը¹⁶ չէին կարող ստեղծվելիք արաբական խալիֆայության մաս կազմել, քանի որ իր երկրի կառավարությունը չէր ուզում դաշնակից Ֆրանսիայի շահերը ոտնահարել: Այսինքն, Ֆրանսիան որոշակի հետաքրքրություններ ուներ այդ տարածքներում: Բացի վերոհիշյալից, ՄակՄահոնը նաև գրում էր, որ՝

1. Սահմանների վերոհիշյալ փոփոխություններով Մեծ Բրիտանիան պատրաստ էր ճանաչել արաբական անկախ պետությունը և պաշտպանել Մեքքայի շերիֆի առաջնորդությամբ այդ պետության սահմանները:

2. Մեծ Բրիտանիան կպաշտպաներ բոլոր սրբավայրերն արտաքին ուժերի հարձակումներից:

3. Հնարավորության դեպքում Մեծ Բրիտանիան կօգներ և խորհուրդներ կտար արաբներին ներքին կառավարումը կազմակերպելու հարցերում:

4. Հասկանալի էր, որ խորհրդականները և այլ ծառայողները կառավարող օղակներում, բացի արաբներից, լինելու էին միայն անգլիացիներ:

5. Ինչ վերաբերում է Բալդադին և Բասրային, ապա արաբները պետք է գիտակցեին Մեծ Բրիտանիայի հատուկ շահերն այդ տարածքներում, և պետք է միջոցներ ձեռնարկվեին այդ վայրերում յուրահատուկ կառավարում կազմակերպելու, օտարների հարձակումներից դրանք պաշտպանելու դրանց բնակչության բարօրության և բրիտանացիների ու արաբների փոխադարձ տնտեսական շահերի պաշտպանության համար¹⁷:

1915թ. նոյեմբերի 5-ի իր նամակում Շերիֆ Հուսեյնը համաձայնեց զիջել միայն Մերսինի և Ալասնայի շրջանները: Ինչ վերաբերում է Հալեպի և Բեյրութի վիլայեթներին, ապա Հուսեյնը նշում էր, որ դրանք գոտ արաբական տարածքներ էին և պետք է ամբողջությամբ ընդգրկվեին Արաբական խալիֆայության մեջ: Նկատի ունենալով այս տարածքների

քրիստոնյա բնակչությանը՝ նա նշում էր. որ տարբերություն չկա մահմեդական և քրիստոնյա արաբների միջև. քանի որ նրանք մեկ նախապապի ծնունդներ են և պետք է ունենան նույն իրավունքներն ու պարտականությունները¹⁸:

1915թ. դեկտեմբերի 14-ին ՄակՄահոնը Հուսեյնին ուղարկած պատասխան նամակում նշում էր. որ Հալեպի և Բեյրութի վիլայեթների հարցը ենթակա էր հետագա քննարկումների¹⁹: 1916թ. հունվարի 1-ի իր նամակում Հուսեյնը, չցանկանալով աշխարհամարտի ընթացքում թուլացնել բրիտանաֆրանսիական դաշինքը, փաստորեն, չպահանջեց վերոհիշյալ վիլայեթների հետագա կարգավիճակի խնդրի վերջնական լուծում՝ հռոյս հայտնելով, որ պատերազմից հետո դրանց հարցը կլուծվեր ի օգուտ արաբների²⁰: 1916թ. հունվարի 25-ին Հենրի ՄակՄահոնն իր պատասխան նամակում ողջունեց շերիֆի այդ որոշումը՝ գրելով. «Մենք բարձր ենք գնահատում այն դյուրապատճառները, որոնցով Դուք առաջնորդվում եք այս կարևոր գործում, և լավ գիտենք, որ գործում եք ի շահ արաբ լսողի, որ Ձեր նպատակն արաբների ազատությունն է... Ինձ որախացրեց Անգլիայի ու Ֆրանսիայի դաշինքը չթուլացնելու Ձեր ցանկությունը»²¹:

Հետագա բանակցությունների ընթացքում շերիֆն այլևս չանդրադարձավ սահմանների խնդրին, սակայն դա չէր նշանակում, թե այդ հարցը վերջնականապես լուծված էր: Հետագայում սահմանների հարցն առաջ էին քաշում Շերիֆի ոլորիները և արաբ ազգայնականները: Օրինակ, Հուսեյնի որդի Էմիր Ալին 1916թ. մայիսի 26-ին՝ թուրքերի դեմ արաբական ապստամբության նախօրեին, իր հորն ուղարկած նամակում նշում էր «Հուսանք, որ Աստված չի մոռանա Ալեքսանդրեթը, Բեյրութը և մյուս շրջանները»²²:

Մինչ Նորին մեծության կառավարությունը Կահիրեում իր պաշտոնական ներկայացուցչի միջոցով բանակցություններ էր վարում արաբների հետ և վարժում նրանց հետ համաձայնության գալ՝ անկախ պետություն խոստանալով նրանց, որի մեջ պետք է ընդգրկվեր նաև Պաղեստինը, նրա մյուս ներկայացուցիչները գաղտնի բանակցություններ էին վարում Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ²³:

Ինչպես արդեն նշել ենք, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյը 1915թ. հոկտեմբերի 21-ին տեղեկացրել էր Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Զամբոնին Շերիֆ Հուսեյնի և ՄակՄահոնի միջև ընթացող նամակագրության մասին: Գրեյը նաև առաջարկել էր, որ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունները համաձայնության գան մյուս դաշնակից Ռուսաստանի հետ՝ Օսմանյան կայսրությունում ունեցած հետաքրքրությունների շուրջ:

1916թ. ապրիլից մինչև մայիս Պետրոգրադում տեղի ունեցած գաղտնի բանակցությունների արդյունքում կնքվեց պայմանագիր. որը պատմության մեջ մտավ «Սալքս – Պիկոյի պայմանագիր» անունով²⁴:

Պայմանագրով Պաղեստինի տարածքում (բացառությամբ Հալափային Նեգևի. որը հետագայում ընդգրկվեց Մեծ Բրիտանիայի մանդատի ներքո գտնվող Պաղեստինի կազմի մեջ), իրականացվելու էր միջազգային կառավարում: Միջազգային կառավարման բնույթը սահմանվելու էր Ռուսաստանի հետ խորհրդակցելուց և մյուս դաշնակիցների, մասնավորապես Մեքքայի Շերիֆի հետ համաձայնեցնելուց հետո: Քարտեզի վրա Պաղեստինը, փաստորեն, ընդգրկում էր հարավում՝ Ղազայից մինչև Մեռյալ ծովի հյուսիսային մասը, արևելքում՝ Երուսաղեմ, Բեթղեհեմ, Երիզով քաղաքները և Հորդանան գետով դեպի հյուսիս՝ մինչև Տիբերիասի լիճն ընկած տարածքները:

Պայմանագրով Ֆրանսիան իր անմիջական տիրապետությունն էր հաստատելու ներկայիս Սիրիայի արևմտյան մասում ու Լիբանանում և ազդեցությունն էր ունենալու Սիրիայի կենտրոնական ու արևմտյան մասերում և Մոսուլի վիլայեթում: Մեծ Բրիտանիան անմիջական տիրապետություն էր հաստատելու ներկայիս արևելյան Իրաքում և ազդեցություն էր ունենալու Իրաքի կենտրոնական ու արևմտյան մասերում, Մասնի սանջակում ու Հաուրանի սանջակի մեծ մասում²⁵:

Սալքս-Պիկոյի համաձայնագրի դրույթները, փաստորեն անհամատեղելի էին Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լիազորված ՄուկՄահոմի՝ արաբներին տված խոստումների հետ:

Բացի այդ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆորը 1917թ. նոյեմբերի 2-ին նամակ ուղարկեց ազգությամբ հրեա յորդ Ռուտշիլդին, որով Նորին մեծության կառավարությունը սլոնիստներին խոստանում էր աջակցություն ցույց տալ Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու հարցում²⁶: Այդ նամակը պատմության մեջ մտավ «Բալֆորի հռչակագիր» անունով:

Նման խոստումներ տալով արաբներին ու հրեաներին՝ բրիտանացիները հետագայում դժվարություններ ունեցան Պաղեստինում Ազգերի Լիգայից ստացած մանդատն իրականացնելիս: 1920-21, 1929թթ. արաբա-հրեական բախումները Պաղեստինում և վերջապես 1936թ. սկսված պաղեստինցի արաբների եռամյա ապստամբությունը, որն արդեն համաարաբական հնչեղություն ուներ, ստիպեցին բրիտանացիներին ավելի շատ հաշվի նստել արաբների հետ:

1938թ. վերջին բրիտանացիները Լոնդոնում կլոր սեղանի շուրջ քննարկումների հրավիրեցին պաղեստինցի արաբներին, Եզիպտոսին, Իրաքին, Սաուդյան Արաբիային, Եմենին և պաղեստինցի հրեաներին²⁷:

1939թ. փետրվարի 7-ին Մուրբ Ջեյմսի պալատում իր աշխատանքներն սկսեց Լոնդոնի կոնֆերանսը, որի մասնակից կողմերն էին բրիտա-

մական կառավարությունը, վերոհիշյալ արաբական երկրների և պաղեստինցի արաբների ու հրեաների պատվիրակությունները³⁰։ Եզիպտոսի պատվիրակն էր արքայազն Մուհամմադ Աբդ ալ-Մունիմը՝ Մեծ Բրիտանիայում Եզիպտոսի դեսպանը։ Իրաքը ներկայացնում էր վարչապետ Նուրի աս-Սաիդը, իսկ Սաուդյան Արաբիան՝ Էմիր Ֆեյսալը՝ Իբն Սաուդ թագավորի պոլին։ Պաղեստինցի արաբների պատվիրակության ղեկավարը Ջամալ ալ-Հուսեյնին էր, իսկ հրեական պատվիրակությունը գլխավորում էր Խայիմ Վայցմանը³¹։

Լոնդոնում պաղեստինցի արաբները հրաժարվեցին սխեմատների հետ բանակցության սեղանի շուրջ նստել՝ մտավախություն ունենալով, որ այդ փաստը կարող է ընկալվել որպես Պաղեստինում հրեաների ելուզած կարգավիճակի de jure ճանաչում³²։

Արաբական պատվիրակության ղեկավար Ջամալ ալ-Հուսեյնին մի քանի անգամ հանդես եկավ զեկույցներով, որոնցում ներկայացվում էին արաբների պահանջները, որոնք, ըստ էության, չէին տարբերվում I աշխարհամարտից ի վեր բրիտանացիներին արաբների ներկայացրած պահանջներից, այն է՝

1. Չեղյալ համարել բրիտանական մանդատը Պաղեստինում։

2. Դադարեցնել Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու գործընթացը։

3. Դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին³³։

Կոնֆերանսում ալ-Հուսեյնին մեկ անգամ ևս նշեց, որ արաբներին մտահոգում էր Պաղեստինում հրեաների գերակայությունը, ուստի նրանք պահանջում էին բրիտանացիներից կատարել պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լիազորված Մակ-Մահոնի՝ արաբներին տված խոստումները³⁴։

Վայցմանն իր ելույթում պահանջեց իրականացնել Բալֆորի հռչակագրով հրեաներին տրված խոստումը, որն, ըստ նրա, հույժ կարևորություն էր ստացել հրեական պատմության այդ շրջանում, երբ հրեաները հալածանքների էին ենթարկվում Եվրոպայում։ Նա, փաստորեն, հրեական հարցի հիմքում դնում էր հրեաների կրած տառապանքների փաստարկը³⁵։

Փետրվարի 23-ին կայացավ հրեաների և արաբական երկրների պատվիրակների առաջին հանդիպումը, որը, սակայն, դրական արդյունք չտվեց։ Նույն օրը Պաղեստինի արաբական պատվիրակության քարտուղար Ջորջ Անտոնիտը հրապարակեց մի հուշագիր, որում արժարժվում էր Հուսեյն-ՄակՄահոն մամակագրության հարցը։ Ըստ Անտոնիտի, քանի որ Հուսեյն-ՄակՄահոն մամակագրությունն ընթացել էր արաբերենով, քանի որ Հուսեյն-ՄակՄահոն մամակները թարգմանվել էին անգլերեն, դրանց արաբերեն և անգլերեն տարբերակներում անհամապատասխանություններ էին առաջացել։ Մասնավորապես, մամակների անգլերեն

տեքստերում խեղաթյուրված էր ներկայացվել արաբերենի «آل، فيلا-
جاء» բառը, որը մախն նշանակում է «շրջան», ապա՝ Օսմանյան կայս-
րության վարչական միավոր: Հուսեյնի և ՄակՄահոնի նամակներում
«آل، فيلاجاء» բառն օգտագործվել էր «շրջան» իմաստով, բացի Հու-
սեյնի՝ 1915թ. նոյեմբերի 5-ի և ՄակՄահոնի՝ 1915թ. դեկտեմբերի 14-ի
նամակներից, որոնցում «Հալեայի և Բեյրութի վիլայեթներ» արտահայ-
տության մեջ այդ բառն օգտագործվել էր Օսմանյան կայսրության վար-
չական միավորի իմաստով: Ըստ Ջորջ Ամտոնիոսի, նամակների անգլե-
րեն տեքստերում, որոնք, ինչպես նշեցինք, թարգմանվել էին արաբերե-
նից, «آل، فيلاجاء» բառը ոչ մի տեղ չէր թարգմանվել «շրջան» իմաս-
տով, այլ գրվել էր «vilayet», որը ենթադրում է Օսմանյան կայսրության
վարչական միավորը: Այսինքն, Հուսեյնի և ՄակՄահոնի նամակների
անգլերեն տարբերակները խիստ աղավաղված էին, քանի որ Օսմանյան
կայսրության կազմում Մերսինի, Ալեքսանդրեթի, Հոմսի և Համայի վիլա-
յեթներ չկային³⁴:

Արաբները պնդեցին, որ ստեղծվեց արաբական պատվիրակության և
քրիստոնեական կառավարության ներկայացուցիչներից կազմված հանձ-
նաժողով, որի խնդիրն էր լինելու ուսումնասիրել Հուսեյն-ՄակՄահոն
նամակագրությունը: Հանձնաժողովը կազմվեց և քրիստոնեական կառա-
վարության ներկայացուցիչ լորդ Մոմի անունով կոչվեց Մոմի հանձնա-
ժողով³⁵: Փետրվարի 24-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստում Ե-
լույթ ունեցավ Մայքլ Մակդոննելը՝ Պաղեստինի Գերագույն դատարանի
նախկին նախագահը: Ելույթում նա, փաստորեն, հերքում էր Ամտոնիոսի
հրապարակած հուշագրի այն դրույթների ճշմարտացիությունը, ոյունք
կապված էին Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության մանրամասնույթ-
յունների հետ: Նա շեշտում էր, որ թեև Հուսեյնը պահանջել էր արաբա-
կան ողջ տարածքները ներգրավել ստեղծվելիք անկախ արաբական
պետության կազմի մեջ, այնուամենայնիվ ՄակՄահոնը նշել էր, որ Աի-
րիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեայի շրջաններից արևմուտք
ընկած մասերը պետք է լինեին Ֆրանսիայի ազդեցության ներքո: Հիմք
ունենալով Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը³⁶
և ՄակՄահոնի վերոհիշյալ նշումը՝ Մայքլ Մակդոննելն իր ելույթում ա-
սում էր, որ նշյալ շրջաններից արևմուտք ընկած Սիրիան մասն Բեյրութի
վիլայեթի հարավային մասն էր, որի մեջ ընդգրկված էր Պաղեստինի
հյուսիսային մասը՝ Աքքայի և Նաբլուսի (Բաղքայի) սանջակները, և Ե-
րուսաղեմի սանջակը³⁷:

1939թ. մարտի 16-ին Մոմի հանձնաժողովը Լոնդոնի կոնֆերանսին
ներկայացրեց Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության ուսումնասիրույթ-

յան արդյունքում կազմված զեկույցը, որտեղ ներառված էին արսբ ներկայացուցիչների փաստարկները և բրիտանացիների հակափաստարկները: Արաբները փաստարկում էին, որ նամակագրության հանգամանքները Հուսեյնին հնարավորություն չէին տվել ճշգրտել ստեղծվելիք արաբական պետության սահմանները, չնայած որ արաբական պետության մեջ Պաղեստինի ընդգրկված լինելու հարցում նա միշտ համոզված էր եղել: Իսկ բրիտանացիները հեշտությամբ բերում էին հակափաստարկներ, թե ՄակՄահոնը, նշյալ շրջաններից արևմուտք ասելով, նկատի էր ունեցել նաև Պաղեստինը: Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում Հուսեյնի և ՄակՄահոնի միջև փոխանակված նամակների անգլերեն տեքստերում որոշակի ճշտումներ էին մտցվել, մասնավորապես «շրջան» բառի փոխարեն օգտագործված «vilayet» բառը փոխարինվել էր «district շրջան» բառով³⁶:

Նման վիճաբանությունները և արաբների բերած փաստարկները որևէ կերպ ազդեցություն չունեցան: Բանակցություններն արսբ սրտովիարկների, բրիտանացիների ու սիոնիստների միջև որոշակի արդյունքներ չտվեցին: Կոնֆերանսը, որի ընթացքում ոչ մի համաձայնություն ձեռք չբերվեց, ավարտվեց 1939թ. մարտի 27-ին³⁹:

Իրականում բրիտանացիները քաջ գիտակցում էին, թե ինչ ելք էր ունենալու լոնդոնյան կոնֆերանսը, սակայն անհրաժեշտ էին համարում արաբների և հրեաների միջև միջնորդի դեր ստանձնել: Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Մակկոլմ Մակդոնալդը հայտարարեց, թե Նորին մեծության կառավարությունը մտադիր էր չելլալ համարել մսուդատը և ստեղծել Պաղեստինյան պետություն, որը բարեկամության դաշինք կկնքեր Մեծ Բրիտանիայի հետ: Մակդոնալդի այս հայտարարությունն ընդգրկված էր 1939թ. Սալիսակ քղթուե⁴⁰:

Այսպիսով, հարկ է փաստել, որ արաբների հետ նախնական պայմանավորվածության ժամանակ հստակ չնշելով ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանները՝ բրիտանացիները հետագայում հմտորեն կալոդացան շահարկել այդ փաստը: Հիմք ընդունելով Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության ընթացքը և նամակների բովանդակությունը՝ կարելի է ենթադրել, որ բրիտանացիներն ընդունում էին, որ Պաղեստինն ստեղծվելիք անկախ արաբական պետության մաս կազմի: ՄակՄահոնի 1915թ. հոկտեմբերի 24-ի նամակի համաձայն՝ արաբական պետության սահմաններից դուրս էին մնում միայն Սերսինի և Ալեքսանդրիայի շրջանները և Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հսդեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը: Պաղեստինն ընկնում էր ՄակՄահոնի նշած տարածքներից հարավ և հարավ-արևմուտք: Այն փաստը, որ հետագայում Պաղեստինը դրվեց բրիտանական, իսկ Լիբանանը ֆրանսիական վերահսկողության ներքո, արաբներին հիմք է ստե-

լիս պնդելու, որ բրիտանացիները երաշխավորել էին Պաղեստինի ընդգրկումը ստեղծվելիք անկախ արաբական պետության մեջ:

Այնուամենայնիվ, Լոնդոնի կոնֆերանսում բրիտանացիները փաստարկեցին, որ ՄակՄահոնը, հաշվի առնելով Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը, Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի մեջ նկատի էր ունեցել նաև Պաղեստինը: Նշենք, որ ՄակՄահոնը չէր կարող Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի մեջ նկատի ունենալ Դամասկոսի (Սիրիայի) և Հալեպի վիլայեթներից արևմուտք ընկած տարածքները, ներառյալ Պաղեստինը, քանի որ Հոմս և Համա քաղաքները Դամասկոսի վիլայեթի մաս էին կազմում, և եթե նա Դամասկոս ասելով նկատի ուներ վիլայեթը, ապա կարիք չկար առանձին նշելու Հոմսը և Համան: ՄակՄահոնը կարող էր հաշվի առնել միայն Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի վարչական բաժանումը, այսինքն՝ նկատի ունենալ Բեյրութի վիլայեթն ամբողջությամբ, չնայած որ վերոհիշյալ շրջաններից արևմուտք ընկած էր Բեյրութի վիլայեթի միայն հյուսիսային մասը: Բեյրութի վիլայեթի հարավային և հյուսիսային մասերն, ընդհանուր սահման չունենալով, բաժանվում էին անմիջապես Բարձր Դռանը ենթարկվող Լիբանանի մութասառիֆությամբ: Այնուամենայնիվ, Բեյրութի վիլայեթը մեկ վաղչատարածքային միավոր էր, և եթե ՄակՄահոնը հաշվի առներ Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի վարչական բաժանումը, ապա պետք է նկատի ունենար նաև Բեյրութի վիլայեթի հարավային մասը՝ Բեյրութի սանջակը և հյուսիսային Պաղեստինը՝ Աքքայի և Նաբլուսի (Բաղքայի) սանջակները: Մակայն եթե մույնիսկ ընդունենք բրիտանացիների բերած փաստարկը, թե ՄակՄահոնը վերոհիշյալ շրջաններից արևմուտք ասելով հաշվի էր առել Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը՝ նկատի ունենալով նաև Բեյրութի վիլայեթն ամբողջությամբ, ներառյալ Պաղեստինի հյուսիսային մասը՝ Աքքայի և Նաբլուսի (Բաղքայի) սանջակները, ապա անմիջապես Բարձր Դռանը ենթարկվող Երուսաղեմի սանջակի դեպքում այդ փաստարկն ընդհանրապես ընդունելի չէ, քանի որ այն ո՛չ ընկած էր Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք, ո՛չ էլ այդ շրջաններից արևմուտք ընկած վարչատարածքային միավորի մասն էր:

THE PALESTINE QUESTION IN THE HUSSEIN-MACMAHON CORRESPONDENCE AND THE LONDON CONFERENCE

The article examines the negotiations between the High Commissioner of Great Britain in Egypt and the Sherif of Mecca, especially the Palestine question in those negotiations. During the World war I the British wanted to gain the Arabs' support against the Turks, promising the Sherif of Mecca to proclaim an independent arab state after the War. Sherif Hussein accepted their proposal and, among other problems, discussed the question of territories, which would be included in the above-mentioned state, with Henry MacMahon, the High Commissioner of Great Britain in Egypt. Based on the contents of the letters exchanged between Sherif Hussein and Henry MacMahon from July 1915 to March 1916, one can say that Palestine was intended to be included in the proposed independent arab state, but the British never accepted that fact. In 1939 the Hussein-MacMahon correspondence was discussed in the London conference, where british and arab delegations made reports on the above-mentioned negotiations, the British trying to prove that MacMahon intended to exclude Palestine from the proposed independent arab state and the arabs opposing them.

Our point of view is the following: Based on the administrative division of Palestine in the Ottoman empire, we conclude that Henry MacMahon intended to include Palestine in the promised arab state.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<>الرسائل المتبادلة بين الشريف حسين وسير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916> - ملف وثائق فلسطين. القاهرة 1969. ص 187-169، الدكتور على سلطان. تاريخ سورية 1908-1918. دمشق 1987. ص 387-383.

Հովհաննիսյան Լ. Ն. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23-24; В.П. Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; Амин Саид, Восстания Арабов в XX веке, Москва 1964, стр. 65-66; McMahon-Husscin Correspondence. <http://WWW.mideastweb.org/mcmahon.htm>.

جورج كوت. دراسات فلسطينية. بدون مكان، 1971. ص 24.

3 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17; М. А. Соловейчик, Историко-географический атлас Палестины, Санк-Петербург 1913, стр.9.

4 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17.

5 Амин Саид, Восстания Арабов в XX веке., Москва 1964, стр. 59-60.

6 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 27.

7 Lorand Gaspar, Histoire de la Palestine, Paris 1968, p. 87.

8 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p.175.

9 Ն.Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Միջին անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23:

10 <<من الشريف حسين إلى سير هنري مكماهون. 14 يوليو سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 169-170.

11 Նովոտեղում:

12 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p. 178; Jon Kimche, The Second Arab Awakening, London 1970, p.51.

13 <<من سير هنري مكماهون إلى الشريف حسين. 30 أغسطس سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 171.

14 <<من الشريف حسين إلى سير هنري مكماهون. 7 سبتمبر سنة 1915. الرسائل المتبادلة بين

الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى مارس 1916>>.. ملف 10

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 172-174.

15 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p. 179.

16 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 39.

17 <<من سير هنري مكماهون إلى الشريف حسين. 24 تشرين الأول سنة 1915. الرسائل

المتبادلة بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>..

ملف وثائق فلسطين. القاهرة 1969. ص 175-176.

18 <<من الشريف حسين إلى سير هنري مكماهون. 5 تشرين الثاني سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 177-178.

19 <<من سير هنري مكماهون إلى الشريف حسين. 14 كانون الأول سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 179-180.

- 20 <<من الشريف حسين إلى سيرهنري مكماهون 1 كما نون الثاني سنة 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين وسيرهنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف وثائق فلسطين. القاهرة 1969. ص 181-182.
- 21 <<من سيرهنري مكماهون إلى الشريف حسين. 25 كما نون الثاني 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين وسيرهنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>>.. ملف وثائق فلسطين. القاهرة 1969. ص 183.
- 22 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary. Beirut 1970. p. 40.
- 23 أبو عمار. ثورة أكتوبر والقضية الفلسطينية. بدون مكان و سنة. ص 9، 23.
- 24 Հովհաննիսյան Լ Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; British Rule by David Mendelson. <http://WWW.jajz-ed.org.il/100/concepts/british.html>.
- 25 <<معاهدة سايكس-بيكو. ابريل-مايو سنة 1916>>.. ملف وثائق فلسطين... ص 193، 24.
- 26 الدكتور علي سلطان. تاريخ سورية 1908-1918. دمشق 1987. ص 417-403.
- 27 Հովհաննիսյան Լ Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24-25; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; The Sykes-Picot Agreement. <http://www.mideastweb.org/mesykcspicot.htm>.
- 28 Jon Kimche, The Second Arab Awakening. London 1970. p. 51.
- 29 <<نصريح بلفور>>.. ملف وثائق فلسطين.... ص 217، 26.
- 30 В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 26; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 55; Г.С.Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 23; Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 18; Е.Дмитриев, В.Ладейкин, Путь к миру на Ближнем Востоке, Москва 1978, стр.18; Richard P.Stevens, Zionism and Palestine Before The Mandate, Beirut 1972, p. 31.
- 31 تهاني هلسه. دافيد بن جوريون. بيروت 1968. ص 53، 27.
- 32 Г.С.Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 38.
- 33 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary. Beirut 1970, p.297.
- 34 Jon Kimche. The Second Arab Awakening, London 1970, p.188.
- 35 صالح مسعود أبو يه. جنداء شعب فلسطين. بيروت 1968. ص 256، 31.

عز الدين فودة. قضية القدس. بيروت 1969. ص 162.

تهاني هلسه. دافيد بن حورون. بيروت 1968. ص 53.

<مذكرة عن عهد بريطانيا للعرب. 22 فبراير سنة 1939>.. ملف وثائق فلسطين... ص 677-682.

<مؤتمر فلسطين. تقرير المجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سنتي 1915 و 1916 بين السير هنري مكماهون المندوب السامي البريطاني بالقاهرة وشريف مكة>.. ملف وثائق فلسطين... ص 705-711.

36 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p. 17.

<جيان أدلى به السيرميشيل ماكدونيل لبعض المسائل القانونية الناشئة عن بيان رئيس 37 القضاة في الجلسة الثانية التي عقدتها اللجنة في يوم 24 فبراير سنة 1939>.. ملف وثائق فلسطين... ص 698-691.

<مؤتمر فلسطين. تقرير المجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سنتي 1915 و 1916 بين الشريف حسين و السير هنري مكماهون المندوب السامي البريطاني بالقاهرة>.. ملف وثائق فلسطين... ص 705-711، <الرسائل المتبادلة بين سير هنري مكماهون و الشريف

حسين من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916>.. ملف وثائق فلسطين... ص 187-169.

McMahon-Hussein Correspondence. <http://WWW.mideastweb.org/memahon.htm>.

39 Г.С. Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 38.

40 Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 27-28.